Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Պ-012[1]-11.02.2019-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր՝ 189.18-րդ հոդված, հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 189.18. Կրթական, գիտական և հետազոտական ծրագրերի շրջանակներում սովորողի կողմից ինքնուրույն կատարման ենթակա առաջադրանքները, հետազոտությունները և այլ գործնական աշխատանքները կատարելու, մշակելու, պատրաստելու ծառայությունների գովազդը

Կրթական, գիտական և հետազոտական ծրագրերի շրջանակներում սովորողի (աշակերտի, ուսանողի, ունկնդրի, հետազոտողի) կողմից ինքնուրույն կատարման ենթակա առաջադրանքները, հետազոտությունները և այլ գործնական աշխատանքները (ռեֆերատ, կուրսային, դիպլոմային, ատենախոսություն և այլն) կատարելու, մշակելու, պատրաստելու ծառայությունների գովազդը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգրքի 219.1-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում «և 189.12-րդ» բառերը» փոխարինե «, 189.12-րդ և 189.18-րդ» բարերով:

Հոդված 3. Օրենսգրքի 223-րդ հոդվածի *2-րդ կետում «189[7]»* թվից հետո» լրացնել *«, 189[18]»* թվերը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ

Հոդված 3. Օրենսգրքի 223-րդ հոդվածի ~~***1-ին մասի 6-րդ***~~ ***2-րդ*** կետում ~~***«189.10»***~~ ***«189[7]»*** թվից հետո լրացնել «~~***եւ 189.18-րդ» բառերը***~~ ***«, 189[18]»*** թվերը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Երկրորդ ընթերցման ներկայացված «Հայաստանի Հանրապետության գովազդի մասին օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի վերաբերյալ ներկայացված գրավոր առաջարկների

	առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը.	*նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը (փոփոխությունը, լրացումը).*	*առաջարկը (փոփոխությունը, լրացումը).*	*առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը.*	*առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
	«Վարչական իրավախախումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի				
1	Հովհաննես Հովհաննիսյան	Հոդված 3.	Շարադրել հետևյալ խմբագրության. Օրենսգրքի 223-րդ հոդվածի ***2-րդ կետում «189[7]»*** թվից հետո» լրացնել ***«,189[18]»*** թվերը:	Ընդունվում է	